ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԱՐԱՐԱՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ,
НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА
“АРАРАТСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ
КОЛЛЕДЖ” ГОСУДАРСТВЕННАЯ
НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

REPUBLIC OF ARMENIA MINISTRY
OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND
SPORT
«ARARAT STATE COLLEGE» STATE NON
COMMERCIAL ORGANIZATION

Հայտարարություն

Համաձայն ՀՀ ԿԳՄՍ նախարար Վ. Դումանյանի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանի 8-րդ կետի՝ տեղեկացնում եմ, որ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում առաջացել է.

1. «**Խոհարարական գործ**» **մասնագիտության վարպետի**,
2. «**Ֆիզիկա**» **առարկայի դասախոսի** 1340 **դասաժամ**,
3. «**Զբոսաշրջության և զբոսաշրջային ծառայությունների ճանաչողություն**» **մոդուլի** 72, «**Զբոսաշրջային ռեսուրսներ**» **մոդուլի** 150, «**Համակարգչային օպերատորություն և մասնագիտական գործունեություն**» **մոդուլի** 51 **դասաժամերի և** «**Զբոսաշրջային ծառայությունների կազմակերպում՝ օտար լեզվի խորացված իմացությամբ**» **մասնագիտության ուսումնական պրակտիկայի** 108 **ժամ թափուր աշխատատեղեր:**

Կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում է հետևյալ պահանջը.

միջին և /կամ/ բարձրագույն մասնագիտական կրթության որակավորում:

Մրցույթին մասնակցելու համար անձը հաստատություն է ներկայացնում.

1) դիմում (Ձև 1),
2) կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (ընօրինակը և պատճենը),
3) անձնագիր (ընօրինակը և պատճենը),
4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 4),
6) մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7) այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8) Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (ընօրինակը և պատճենը),
9) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական աստիճան, կոչումը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Դիմումներն ընդունվում են հրապարակման օրվանից 10-օրյա ժամկետում:

***Հասցե՝ Ք. Արարատ, Խանջյան** 67, **Արարատի պետական քոլեջ հեռ.՝** 0234 4-41-01, 099 97 27 47*
Էլ. հասցե՝ collegeararat@mail.ru